ԹԻՎ 18 ԸՆՏՐԱՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԸՆՏՐԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

«6» հոկտեմբերի 2022թ.
ք.Թալին

Ո Ր Ո Շ ՈՒ Մ 33-Ա

ԱՐԱԳԱԾՈՏՆ ՄԱՐԶԻ ԹԱԼԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2022 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 25-Ի ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ՄԱՍՆԱԿՑԱԾ «ԱՊՐԵԼՈՒ ԵՐԿԻՐ» ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ԸՆՏՐԱԿԱՆ ՑՈՒՑԱԿՈՒՄ ԸՆԴԳՐԿՎԱԾ, ԻՆՔՆԱԲԱՑԱՐԿ ՆԵՐԿԱՅԱՑՐԱԾ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄԻ ԹԵԿՆԱԾՈՒՆԵՐԻ ԳՐԱՆՑՈՒՄՆԵՐՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգիրք» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի 141-րդ հոդվածի 9-րդ մասով և հիմք ընդունելով 2022 թվականի սեպտեմբերի 25-ին կայացած Արագածոտն մարզի Թալին համայնքի ավագանու ընտրություններին մասնակցած կուսակցության ընտրական ցուցակում ընդգրկված ավագանու անդամների թեկնածուի կողմից թիվ 18 ընտրատարածքային ընտրական հանձնաժողով ներկայացված ինքնաբացարկի և մանդատից հրաժարվելու մասին դիմումները՝ թիվ 18 ընտրատարածքային ընտրական հանձնաժողովը

Ո Ր Ո Շ ՈՒ Մ Է.

1. Ուժը կորցրած ճանաչել «Ապրելու երկիր» կուսակցության ընտրական ցուցակում ընդգրկված ավագանու անդամի թեկնածուներ Սաթենիկ Սաֆարյանի, Շուշանիկ Ալեքսանյանի, Սոնա Հովհաննիսյանի, Հասմիկ Ալեքսանյանի, Ատլաս Մանուկյանի, Թամարա Թորոսյանի, Լուսինե Մկրտչյանի, Արմինե Սաֆարյանի, Տաթևիկ Խամոյանի, Լուսիկ Խամոյանի, Լիլիթ Հովսեփյանի, Թամարա Վարդանյանի, Լիա Թադևոսյանի, Լարինա Կարապետյանի գրանցումները:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում նիստում հրապարակելու պահից:

ԹԻՎ 18 ԸՆՏՐԱՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԸՆՏՐԱԿԱՆ
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ Հ. ԱՍԱՏՐՅԱՆ